

սերնդին այն անհուն սիրով, որ տածել են մեր անվանի գրողները դեպի հայրենի բնությունը, նրա գեղեցկությունը:

Դասագիրքը գրված է կենդանի, աշխույժ լեզվով. այն անպայմանորեն կօգնի աշակերտությանը սովորելու կիրթ, հստակ, գեղեցիկ հայերենին:

Հ. Թամրազյանի այս ձեռնարկը անժխտելի հաջողություն է մեր դասական գրականության պատմության գիտական լուսարանման գործում:

ԳԱՐ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

## Ա. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ «ՄԱՐՏԻՐՈՍ ՂՐԻՄԵՑԻ»

Վերջին երկու տարում ՀՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Մ. Արեղյանի անվան Գրականության ինստիտուտը հրատարակեց մի քանի մատենագրական բնագրեր և հայագիտական ուսումնասիրություններ՝ նվիրված հայ գրականության միջին դարերի շրջանին. Եղիշեի «Վասն Վարդանայ և հայոց պատերազմին» գիտահամեմատական բնագիրը (կազմող՝ Երվանդ Տեր-Մինասյան), «Էջեր հայ միջնադարյան գեղարվեստական արձակից» (առաջարանով և խմբագրությամբ Կ. Մելիք-Օհանջանյանի), «Արտա վերապ նամակ»-ի հայերեն թարգմանությունը պահլավերեն բնագրից (թարգմ. Ռուբեն Աբրահամյան), Մ. Ավդալբեգյանի «Պաշտուր Կեչառեցի» և Ա. Սրապյանի «Հովհաննես Երզնէացի» մենագրությունները:

Հայ ժողովուրդը դարերի ընթացքում ստեղծել է գրական և մշակութային հարուստ ժառանգություն, որի գիտական արժեքավորումը սովորաբար բանասիրության պատվի գործն է: Այս տեսակետից Մ. Արեղյանի անվան Գրականության ինստիտուտը ողջունելի քայլ է կատարում:

Այժմ հրապարակի վրա է, նույն ինստիտուտի հրատարակությամբ, Ա. Մարտիրոսյանի «Մարտիրոս Ղրիմեցի» մենագրությունը\*: Գիրքը նվիրված է XVII դարի հայ նշանավոր հասարակական գործիչ, տաղասաց, մատենագիր Մարտիրոս Ղրիմեցուն:

Ղրիմեցին կարևոր տեղ ունի հայ ժողովրդի XVII դարի պատմության մեջ: Այդ դարի 60-ական թվականներին Երուսաղեմի պատրիարք Եղիազար Ալնթափցին, ձգտելով ստեղծել էջմիածնից անկախ կաթողիկոսություն և հայության արևմտյան հատվածը անջատել էջմիածնից, պառակտում էր հայ քաղաքական և եկեղեցական միասնությունը: Մինչդեռ էջմիածինը հայկական պետականության բացակայության պայմաններում ստանձնել էր ժողովրդի ոչ միայն եկեղեցական, այլև քաղաքական ղեկավարության դերը:

Ալնթափցու գործառնությունները կարող էին ծանր հարված հասցնել հայ ժողովրդի մի ամբողջ հատվածի ինքնապահպանությանը և ազգային գոյությանը: Մարտիրոս Ղրիմեցին այդ շրջանի այն սակավաթիվ գործիչներից էր, որն ամբողջ լրջությամբ ըմբռնեց վտանգավոր դրությունը և պալքարի ելավ Ալնթափցու հակաթոռ կաթողիկոսության ծրագրերը խախտելու համար:

Ղրիմեցու քաղաքական հակառակորդները պատմության մեջ նրա դերը ներկայացրել են գորշ և աղավաղ գույներով: Գրախոսվող աշխատության հեղինակը կարողացել է համոզիչ փաստարկներով ոչ միայն վեր հանել Մար-

\* Ա. Ա. Մարտիրոսյան, Մարտիրոս Ղրիմեցի, Երևան, 1980:

տիրոս Ղրիմեցու հասարակական գործունեությունը և տալ նրա ճիշտ գնահատականը, այլև հաջողությամբ ցրել այն անարդարացի պատկերացումը, որ ստեղծվել էր նրա անվան շուրջը: Այստեղ Ղրիմեցին ներկայացված է պատմական իրադարձությունների մեջ, իր գրական-քաղաքական լայն կապերով: Նա հայ ազատագրական շարժման առաջին գործիչներից մեկի՝ Հակոբ Զուղայեցու ակտիվ գործակիցն էր և ծանոթ երիտասարդ Իսրայել Օրիին:

Ա. Մարտիրոսյանը մեծ տեղ է հատկացրել Մարտիրոս Ղրիմեցու ստեղծագործության վերլուծությանը:

Ղրիմեցին բազմաժանր գրող է: Նա ունի ողբեր, պատմական թեմաներով գրված չափածո երկեր, քնարական տաղեր, երգիծական ոտանավորներ, աշուղական երգեր, կրոնական բանաստեղծություններ և այլն: Մարտիրոսյանը հանգամանորեն վերլուծել է դրանք: Նրան հաջողվել է վեր հանել Երևմտյան Վրբի գեղարվեստական մշակման մեջ Ղրիմեցու հասարակական-քաղաքական դադարները:

Ուսումնասիրության մեջ առաջ են քաշված և արծարծված միջնադարյան բանաստեղծության, նրա զարգացման բնույթի, բանաստեղծության ձևերի հետ առնչվող շատ ուշագրավ խնդիրներ:

Հայտնի է, որ XVll դարի հայ բանաստեղծությունը քիչ է ուսումնասիրված: «Մարտիրոս Ղրիմեցի» մենագրությունը, լինելով այդ ուղղությամբ առաջին հաջողված քալերից մեկը, ավելի մեծ նշանակություն է ստանում:

Ուսումնասիրության հետ միասին հեղինակը ներկայացրել է Ղրիմեցու հրկու տասնյակ չափածո երկերի գիտահամեմատական բնագրեր: Մյուսնք ինքնատիպ և ուշագրավ ստեղծագործություններ են և ունեն ոչ միայն պատմական-կենցաղագրական արժեք, այլև իրենց բովանդակությամբ, գեղարվեստական կատարման ձևերով, երգիծանքի սրությամբ կարող են հետաքրքրել նաև ժամանակակից ընթերցողին: Բանաստեղծը անխնա ծաղրում է հատկապես ֆիչացած և բարոյազուրկ հոգեորականներին, նրանց բարքերը, կենցաղը: Մի քանի զոդարիկ տաղերի մեջ չմերժելով գինին, խրախճանքը, ուրախությունը՝ Ղրիմեցին պաշարում է արբեցողության, գինեմոլության դեմ. թեմաներ, «րոնք զուրկ չեն այժմեականությունից:

Ուշագրության է արժանի գրքի «Ծանոթություններ» բաժինը: 'Իտոդություններն ընդգրկում են միայն անհրաժեշտը, զերծ են ավելորդություններից: Այստեղ բերված է Ղրիմեցու գրչին պատկանող այն նյութերի ցանկը որոնք չեն մտել գրքի մեջ: Դրանց թվում են աշխարհի զանազան հայկական մատենադարաններում ցրված և հրատարակողին անմատչելի բնագրեր՝ բանաստեղծություններ, պատմական երկեր, նամակներ և այլն:

Մարտիրոսյանի ձեռքի տակ գտնվել են նաև այնպիսի նյութեր, որոնք յարդ մնում են անտիպ («Գանձս ասացեալ ի Մարտիրոս վարդապետէ Ղրիմեցու», «Տաղ», Անկյուրիայի վանքի գովեստը և այլն): Մյուսնք բնագրերի լավագույն ընդօրինակություններ պահպանվել են մեր Մատենադարանի ձեռագրերում:

Մարտիրոսյանը իր ուսումնասիրության մեջ խոսում է ինչպես նշված անտիպ տաղերի, այնպես էլ Ղրիմեցու գիմանկարի մասին, միայն պետք է զարմանալ, որ դրանք տեղ չեն գտել գրքում:

Ղրիմեցու ստեղծագործությունների համեմատական բնագրերը կազմված են լուրջ գիտական սկզբունքով: Կազմողը բոլոր վրիպակներն ու տարրն-

Թերցվածները չէ որ անխտիր հաշվի է առել և իջեցրել տողատակ: Ընտրված են միայն երկրային ձևերը, իսկ կասկած չհարուցող ակնբախ սխալները դուրս են թողնվել գրքից, որպեսզի ավելորդ ծանրաբեռնվածություն չստեղծվի: Այս սկզբունքը, մեզ թվում է, առավել գիտական է: Սակայն չի բացառվում այն հանգամանքը, որ չնշվող տարրնթերցվածներն անջատելիս պետք է ցուցաբերել անհրաժեշտ զգուշություն, հնարավոր թյուրիմացություններից խուսափելու համար: Այս վերաբերում է մանավանդ առավել վաղ շրջանի բնագրեր հրատարակողներին:

Պետք է խոսել նաև բնագրագիտական մի այլ խնդրի մասին, որը ծառայում է յուրաքանչյուր համեմատական բնագիր կազմողի առջև: Դա ըթագրություն հարցն է: Միջնադարյան գրիչները չափաժո ստեղծագործություններ ընդօրինակելիս բառամիջում կամ սկ, ստ, սպ և այլ կապակցություններից առաջ երբեմն ը-երը գրում են, երբեմն՝ ոչ, ցուցաբերելով այս հարցում ծայրահեղ անհետևողականություն և անկանոնություն: Հարց է ծագում՝ համեմատական բնագիր կազմելու ժամանակ պահպանել ը-երը, թե՛ ոչ: Պահպանելու դեպքում անհրաժեշտություն է առաջանում լրացնել նաև ձևագրում բացակայող ը-երը, այսինքն՝ բոլոր այն դեպքերում, երբ հանգը պարզ դարձնելու համար հարկավոր է ը, բայց ձևագիրը չի տալիս, պետք է ավելացնել այն: Իսկ եթե որոշվում է ը-երը չնշել՝ կնշանակի պետք է հրաժարվել նաև ձևագրում եղած բոլոր ը-երից: Կերչին մեթոդը արդեն ընդհանրություն է գտել: Առանց ըթագրության են ներկայացվել նաև գրախոսվող գրքում գետնեղված բնագրերը: Մեր կարծիքով, սակայն, ը-երն օգնում են հանգերը ճիշտ արտաբերելուն և կարգավորում են սաղաչափությունը, և լավ կլինի՝ միջնադարյան չափաժո բնագրեր հրատարակելիս, - մանավանդ առավել անհրաժեշտ դեպքերում, - պահպանել ըթագրությունը: Նկատելի է, որ Մարտիրոսյանն ինքը ըթագրության այդպիսի անհրաժեշտություն զգացել է և հաճախ պահպանել ը-երը, այնտեղ, որտեղ առանց նրանց անհնարին է բնագիրը ճիշտ կարդալ. օրինակ՝

Ձերկինս ամպօք շրջապատեալ ամրացուցեո,

Ձի մի հասցեն ի լսելիսդ աղօթըք մեր:

(էջ 36)

Վերջացնելով ասեմք, որ «Մարտիրոս Արիմեցի» մենագրությունը գնահատելի ավանդ է հայագիտության մեջ:

Գ. Վ. ԱՆԳՍՏՅԱՆ